# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

*Կոնդակ յանուն Գեր. Թեմակալին Վրաստա. և Իմերէթի Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի, որով տուան նմա հրահանգք յաղագս նորոգութեան Վանուց աւագ եկեղեցւոյ. Թ.* 628:

— *Յանուն վիճ. Կոնսիստորիային Երևանայ, որով յայտնեցաւ զկարգմանէ քննչի զեղծմանցն Լևոն քահ.-ի Իգդիր Աւանի. Թ.* 641:

— *Յանուն նոյն Կոնսիստորիայի, որով յայտնեցաւ նմին զՀայրապետական շնորհաց յաղագս ներելոյ Ղևոնդ, Յովհաննէս և Միքայէլ յանցաւոր քահ.-ից. Թ.* 642:

— *Յանուն Գեր. Տ. Գէորգ Արքեպս.-ի Սուրէնեան, Գիտ Ա. քահ.-ի Աղանեանեանց, Պ. Պ. Գէորգայ Նւանդուլեանց, Արգարու Յովհաննիսեանց և Ալէքսանդրի Երիցեանց, որով կարգեցան Մնայուն Յանձնաժողով նորոգ կառուցեալ Եկեղեց. պատմական Թանգարանի պ. Աւետիքեայ Բ. Ղուկասեանց, որ ի դաւթի Վանուց աւագ եկեղեցւոյ Տփխեաց. Թ.* 660:

— *Յանուն վիճ. Կոնսիստ. Երևանայ, յաղագս կոչելոյ յատեան իւր և յանդիմանելոյ զԱրսէն քահ. Վաղարշապատայ, ի պատճառս անիրաւ վարմանց իւրոյ ընդդէմ գաղթականի Յակոբայ Մուրադեան. Թ:* 691:

— *Յանուն նորընտիր Հոգաբարձութեան Թեմակ. Հոգ. Դպրանոցին Երևանայ, որով հաստատեցան ի պաշտաման իւրեանց. Թ.* 701:

— *Յանուն Հոգևոր Կառավարութեան Ալէքսանդրապոլի, որով պատուիրեցաւ թողուլ ընդ իրաւասութեամբ փոխահօր վանուցն Հառիճոյ պարտի արդիւնս շրջակայ տասն գիւղօրէից. Թ.* 719:

— *Յանուն Գեր. Թեմակալին Բեսարաբիոյ Տ. Ներսէս Արքեպս.-ի, յաղագս քննելոյ զգործ պսակալուծութեան Թէոդոսիացի Գաբրիէլի Տ. Դաւթեան. Թ.* 740:

— *Յանուն Փոխանորդաց, փոխահարց, գործակալաց վիճակաց, որով յանձնարարեցաւ աջակցել Տեսչի Հոգևոր Ճեմարանի Մ. Աթոռոյ Տ. Կարապետ վարդապետի ի ճանապարհորդութիւն նորին. Թ.* 761:

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ առնել կարգադրութիւն յաղագս վիճելի ջրոյ վանքապատկան Եղուարդ գեղջ ընդ շրջակայ այլազգեաց. Թ.* 762:

— *Յանուն Թեմակ. Վրաստանի և Իմէրէթի Տ. Գէորգ Արքեպս.-ի, որով յայտնեցաւ նմա զկարգումն Գեղամ վարդապետի յօգնական կառավարչի կալուածոցն Մարգայ. Թ.* 767:

— *Յանուն նոյն Թեմակալի, որով յայտնեցաւ նմա զկարգումն Միքայէլ վարդապետի Դաւթեան ի փոխահայր վանուցն Հաղբատայ. Թ.* 770:

— *Յանուն Միքայէլ վարդ.-ի որով կարգեցաւ փոխահայր վանուցն Հաղբատայ. Թ.* 771:

— *Յանուն կառավարչի կալուածոցն Մարգայ Թովմա վարդապետի, որով յայտնեցաւ նմա զկարգումն Գեղամ վարդ.-ի յօգնական իւր. Թ.* 773:

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ նշանակել ի վիճակային արդեանց Տփխիսոյ ի տարին երկերիւր (200) ռ. կենսաթոշակ պ. Մարտիրոսի Գէրէստեճեանց ի վարձ բազմամեայ ծառայութեան նորա ի Հոգևոր Ատեանս. Թ.* 779:

— *Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտնեցաւ, եթէ լուծեալ է պսակն Տաճկահպատակ Կարինեցի Տիգրանայ Տապաղեանց ՚ի*

պատճառս անյայտ բացակայութեան նորին. թ. 780։

— Յանուն Նորընտիր Հոգաբարձութեան Թեմակ. Հոգ. Դպրանոցին Արցախայ, որով հաստատեցան ի պաշտաման իւրեանց. թ. 785։

— Յանուն Դեր. Տ. Թեմակ. Շամախւոյ Նայի Արքեպս.-ի յաղագս տալոյ կացուցանելոյ յարաշխարանաց իւրոց զՍահակ քահ. Մակարեանց. թ. 793։

— Յանուն Հոգ. Կառավարութեան Նուխւոյ, յաղագս հոգալոյ զծախս դատավարութեան կալուածոց վանուցն Ճալէթի ի միճակային արդեանց տեղւոյն. թ. 822։

— Յանուն Վանական Կառավարութեան Մ. Աթոռոյ, որով պատուիրեցաւ տալ ճանապարհածախս Տ. Բագրատ վարդապետի Վարդազարեան ի գնալ յԱստրախան պաշտամամբ Փոխանորդի Առաջնորդի. թ. 839։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտնեցաւ զհաստատութենէ Դեր. Տ. Գրիգոր եպս.-ի Դսանակերեան Թեմակալ Առաջնորդ միճակին Արցախայ. թ. 842։

— Յանուն Տ. Գարեգին վարդապետի Սաթունեանց, որով պատուիրեցաւ յանձնել Տպարանական Վարչութեան Մայր Աթոռոյ զժողովեալ դրամս որ յանուն տպագրութեան Աստուածաշնչոյ Ս. Գրոց գումարու 5345 ր. թ. 843։

— Յանուն Նախագահի Տպարանական Ժողովոյ Տ. Աշոտ վարդապետի, որով պատուիրեցաւ ի հանգանակեալ գումարէն փոխել մի հազար րուբլի ի գին նորոգ գնելոյ մեքենային, որ վասն տպագրութեան Ս. Գրոց և զմնացեալ գումարն տալ յաւանդ ի գանձարան Մ. Աթոռոյ. թ. 848։

— Յանուն Տ. Բագրատ վարդ.-ի Վարդազարեանց, որով կարգեցաւ Փոխանորդ Առաջնորդի միճակին Պարսկաստանի և Հնդկաստանի. թ. 849։

— Յանուն Դեր. Թեմակալին Ատրպատականի Տ. Սահակ եպս.-ի Այվազեանց, որով լուծեալ համարեցաւ պսակն Դարադագցի Սարգսի Բարախանեան ընդ կնոջ իւրոյ Հուրիի ի պատճառս պոռնկութեան վերջնոյս. թ. 901։

— Ընդհանրական յանուն ժողովրդեան թեմին Արցախայ (Ղարաբաղ), որով յայտնեցաւ նոցա զկարգումն և զհաստատութենէ. Դեր. նորոգ Թեմակալի միճակին Տ. Գրիգոր Եպիսկոպոսի. թ. 902։

— Յանուն վարչութեան Հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյ, որով յաւելաւ այլ ևս երեք հարիւր (300) րուբլի ի վերայ տարեթոշակի Մուշեղ սարկաւագի, որ ուսանի ի համալսարանս Ռուսիոյ. թ. 904։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ արձակել ի կողմանէ Նախագահողի Ատենին զօրագիրս Սինոդի ի բացակայութեան Վեհ. Հայրապետի, ի բաց առեալ օրագիրս պսակալուծութեանց, որք պարտին կազմել ի ներկայութեան Վեհ. Հայրապետի Ս. Սինոդի. թ. 911։

— Յանուն Տ. Ղեւոնդ վարդ.-ի Յովակիմեան, որով նշանակին նմա գործակիցք Մխիթար, Տիրայր և Կորիւն վարդապետք, որպէս անդամք յանձնաժողովի և պատուիրի տեսանել պատրաստութիւն յաղագս ընդունելութեան Արեգակնափայլ Շահնշահ Ինքնակալին Պարսից ի պատճառս այցելութեան Նորին Մեծութեան ի Մայր Աթոռն Արարատեան. թ. 912։

— Յանուն Դեր. Նախագահի և Հոգաբարձութեան Թեմակ. Հոգևոր դպրանոցին Արցախայ, որով հաստատի Տ. Բենիկ վարդապետն Տեսուչ դպրանոցին Շուշւոյ. թ. 913։

## Պարգևք Հայրապետականք.

Կոնդակ յանուն Տ. Յովսէփ Ա. քահ.-ի Մելեան ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյն Երևանայ, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ի արխաւր արդիւնաւոր գործունէութեան նորին յընթացս քառասուն և հինգ ամեայ անբիծ ծառայութեան ի քահանայական կոչման իւրոյ. թ. 626։

— Յանուն Տ. Բագրատ վարդապետի Վարդազարեանց, որով շնորհեցաւ նմա սև ծաղկեայ կերպասեայ փիլոն. թ. 850։

## Հայրապետական օրհնութիւն.

Կոնդակ օրհնութեան յանուն պ. Աւետիքեայ Բ. Ղուկասեանց, յաղագս նորոգ կառուցեալ եկեղեց. պատմական Թանգարանին

ծախուք նորին ի գաւթի Վանուց առաջ եկե-ղեցւոյ Տփխեաց. Թ. 650։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն նախկին Հոգաբարձութեան դպրանոցին Ներսիսեան վասն արդիւնաւոր ջանիցն յընթացս պաշտօնավարութեան նոցին. Թ. 702։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն տ. Գրիգորի Ջանշեանց, յաղագս նուիրաբերութեան նորա բազմաթիւ գրեանց Հոգ. Ճեմարանի Մ. Աթոռոյս. Թ. 741։

— Օրհնութեան յանուն տիկին Անանեա-նոյ Թամիրեան Նուշեցւոյ. Թ. 778։

# ԿՐՕՆԱԿԱՆ

## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

### ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Ա.

Ոչ եկեղեցու ծագումը եւ ոչ նորա իսկական նպատակը անմիջական կապ ունի գիտութեան հետ։ Քրիստոս փիլիսոփայ չէր եւ ոչ որեւ է գիտնական դպրոցի հիմնադիր։ Նա եկել էր մարդկութեան Փրկիչը լինելու զուտ կրօնական—բարոյական տեսակէտով։ Քրիստոնէութեան գոյութեան հիմնաքարը Յիսուսի գործն ու անձնաւորութիւնն է եւ հաւատացեալների դէպի Նա ունեցած հաւատը։ Եկեղեցու հաստատութեան մեծ շէնքը այս հաւատի վերայ է կանգնած իւր ծագման օրերից մինչեւ այժմ։

Քրիստոնէութիւնը կրօն էր, իսկ կրօնը ոչ գիտութիւն է եւ ոչ արուեստ, բայց բնական էր, որ հեռզհետէ քրիստոնէական գիտութիւնն ու արուեստը ծագէր։ Քրիստոնէութիւնն հաստատուել եւ կեանք է առացել պատմութեան մէջ. շփուել է յունա—հռովմէական քաղաքակրթութեան հետ, խւրացրել կամ՝ յուսաբանել է հին քաղաքակրթութեան այլ եւ այլ տարրերը, իւր համար նոր աշխարհայեցողութիւն կամ՝ փիլիսոփայութիւն ստեղծել. այս զարգացման բնական հետեւանքն էր քրիստոնէական գիտութեան ծագումը։ Քրիստոնէութեան մէջ միշտ էականը կրօնական հաւատն է եղել միացած անաբատ բարոյականութեան հետ, բայց գիտութիւնը ու արուեստն էլ միշտ յարգելի դաշնակիցներ համարուել նորա զարգացման լաւագոյն շրջաններում։

Քրիստոնէութիւն եւ գիտութիւն տարբեր են միմեանցից, բայց նոքա հակառակութիւններ չեն. Աւետարանի ազատ ոգին ամենեւին դէմ՝ չէ գիտութեան։ Ընդհակառակն Աւետարանի քարոզած բարոյական կատարելութեան համար նպաստաւոր միջոցներ են գիտութիւնն ու արուեստը։ Իսկական քրիստոնէութիւնը հետամուտ է միմիայն ճշմարտութեան իսկ ճշմարտութիւնը ազատութիւն (Յովհ. ը. 32) եւ զօրութիւն է տալիս մարդուն, ճշմարտութիւնը ըմբռնելու երկու ճանապարհ ունինք, կրօն եւ գիտութիւն, երկուսն էլ մարդկային սահմանաւոր հոգու համար միեւնոյն Աստուծոյ տնօրէնութիւններն ու վերջնական նպատակները հասկանալու միջոցներ։ Ոչ մի գիտութիւն, որ անկեղծութեամբ հետամուտ է ճշմարտութեան, վնասակար լինել չէ կարող կրօնի համար. նոյն իսկ բնական գիտութիւններն, որ ըստ երեւոյթին կապ չունին հոգեւոր գիտութիւնների հետ, Աստուծոյ իմաստութեան եւ ամենակարողութեան յայտարարներ են։ Բնական գիտութիւններից յառաջ եկած նիւթապաշտական աշխարհայեցողութիւնը, որ թշնամական դիրք էր բռնել դէպի քրիստոնէութիւնը, մի մոլորութիւն էր, որ վաղուց ջախջախուած է գիտութեան անաչառ դատաստանի առաջ։

Բ.

Արդարեւ եկեղեցու պատմութիւնը պարզում՝ է մեր առաջ քրիստոնէական կրօնի, գիտութեան եւ արուեստի բարեկամական յարաբերութիւնը, Հէնց առաքելական շրջա-